

ՀԵՀԵՄ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՌԻՏՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ
«Քրիստոնեայ Ընտանիքը՝ Հայ Ինքնուրեան Խարիսխ»

ՕՐԱԿԱՐԳ
Յուլիս 2-7, 2025

Զորեքշաբթի, Յուլիս 2

Ժամը 14:00-16:00 – Մասնակիցներու գրանցում ՀԵՀԵՄ Կենտրոնական գրասենյակին մեջ, մեկնում դեպի Աղվերանի Park Resort հիւրանոց եւ տեղաւորում:

Երեկոյեան – Ընթրիք

Հինգշաբթի, Յուլիս 3

08:30-10:00	Առաւօտեան ժամերգութիւն եւ նախաճաշ
11:00-12:00	Պաշտօնական բացում
12:00-12:30	Ընդմիջում
12:30-13:00	Նիստ 1: Աստուծոյ Թագաւորութիւնը
13:00-14:30	Խմբային քննարկումներ
14:30-16:00	Ճաշի ընդմիջում
16:00-16:30	Նիստ 2: Սուրբ Եկեղեցին
16:30-17:15	Խմբային քննարկումներ
17:15-17:30	Սուրճի ընդմիջում
17:30-18:30	Խմբային քննարկումներ (շար..) եւ առաջին օրուան ամփոփում
18:30	Երեկոյեան ժամերգութիւն
19:00	Ընթրիք

Ուրբաթ, Յուլիս 4

09:15	Առաւօտեան ժամերգութիւն
9:30-10:30	Նախաճաշ
10:30-11:00	Նիստ 3: Ընտանիքը՝ Եկեղեցոյ Հիմքը
11:00-11:40	Խմբային քննարկումներ
11:40-12:00	Սուրճի ընդմիջում
12:00-13:00	Խմբային քննարկումներ (շար..)
13:00-14:30	Ճաշի ընդմիջում

14:30-15:30	Այց եւ աղօթք Խաչքարերու պուրակին մէջ: Ուխտագնացութիւն դէպի Իշխանականք (հիւրանոցին մօտակայքը)
15:30-16:00	Նիստ 4: Ամուսնութիւնը եւ Ռոմանտիկ Հարաբերութիւնը
16:00-16:40	Խմբային քննարկումներ
16:40-17:00	Սուրճի ընդմիջում
17:00-18:00	Ճաշի ընդմիջում
18:00	Երեկոյեան ժամերգութիւն
18:30	Ընթրիք

Շաբաթ, Յուլիս 5

Ուխտագնացութիւն Կոտայքի եւ Գեղարքունիքի թեմերու սրբավայրերու մէջ

Այց Մաքրավանք, Հայրավանք, Սեւանի թերակղզի:

Աղօթք, խոկումներ եւ նախորդ օրերու թեմաներու վերաքաղ:

(Ճաշ Սեւանի մէջ)

Կիրակի, Յուլիս 6

08:00	Նախաճաշ (այն մասնակիցներուն համար, որոնք պիտի չստանան Ս. Հաղորդութիւն)
09:00	Մեկնում դէպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
11:00	Սուրբ եւ Անմահ Պատարագ՝ Մայր Տաճարին մէջ
14:00	Ճաշի ընդմիջում
17:00	Փակման խնճոյք

Երկուշաբթի, Յուլիս 7

Նախաճաշ եւ վերադարձ դէպի ՀԵՀԵՄ Կեդրոնական գրասենեակ (Արովեան 15/1)



Աստուծոյ Թագաւորութիւնը, Եկեղեցի, Ընտանիք եւ Ամուսնութիւն

Նիստ 1. Հասկնալ Աստուծոյ Թագաւորութիւնը

- **Նպատակ** – Սահմանել Աստուծոյ Թագաւորութիւնը եւ հասկնալ անոր նշանակութիւնը քրիստոնէական հաւատքի մէջ:

- **Սուրբ Գրային յղումներ** –

- Մտթ. 6.33 – «Դուք նախ փնտեցէ՛ք Աստուծոյ արքայութիւնը եւ անոր արդարութիւնը. եւ այդ բոլորը աւելիով պիտի տրուին ձեզ:»

- Մրկ. 1.14–15 – «Յովհաննէսի բանտարկութիւնէն ետք՝ Յիսուս եկաւ Գալիլիա եւ կը քարոզէր Աստուծոյ Աւետարանը՝ ըսելով. «Ժամանակը հասած է, եւ Աստուծոյ արքայութիւնը մօտեցած է. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին»:»

- Դուկ. 17.20–21 – «Երբ փարիսեցիները հարցուցին, թէ ե՞րբ պիտի գայ Աստուծոյ արքայութիւնը, Յիսուս պատասխանեց. «Աստուծոյ արքայութիւնը տեսանելի կերպով չի գար. պիտի չըսեն՝ ահա՛ այստեղ է կամ այնտեղ է, որովհետեւ ահա՛ Աստուծոյ արքայութիւնը ձեր մէջ է»:»

- Հռոմ. 14.17 – «Որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը կերակուր կամ խմելիք չէ, այլ՝ արդարութիւն, խաղաղութիւն եւ ուրախութիւն՝ Սուրբ Հոգիէն ներս»:

Առաջին խորհրդածութեան նիւթ (5 վայրկեան)

Մրկ. 1.15 – «Ժամանակը հասած է, եւ մօտեցած է Աստուծոյ արքայութիւնը. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին»: Պէտք է շեշտել, թէ Քրիստոսի քարոզութեան հիմնական նիւթը Աստուծոյ Թագաւորութիւնն է:

Ուսուցողական Տեքստ (15–20 վայրկեան)

- Աստուծոյ Թագաւորութիւնը Տէր Յիսուսի ուսուցումներուն մէջ հիմնական թեմա է եւ կեդրոնական՝ քրիստոնէական հաւատքին մէջ: Ան ոչ միայն ապագայի հեռաւոր իրականութիւն մըն է, այլ նաեւ ներկայ հոգեւոր ճշմարտութիւն մըն է, որ կը սկսի է հաւատացեալներու սրտերէն եւ կ'արտայայտուի Եկեղեցւոյ կեանքին մէջ: Երբ Տէր Յիսուս սկսաւ Իր ծառայութիւնը, յայտարարեց. «Աստուծոյ Թագաւորութիւնը մօտ է. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին» աշխարհահայեացի արմատական փոփոխութիւն:
- Թագաւորութիւնը կը բնութագրուի արդարութեամբ, խաղաղութեամբ եւ ուրախութեամբ՝ Սուրբ Հոգիով (Հռոմ. 14.17), եւ որպէս այս Թագաւորութեան քաղաքացիներ՝ մենք կոչուած ենք մեր կեանքով արտայայտելու այս

արժեքները: Մենք կը մար աւորենք Թագաւորութիւնը, երբ կ'ապրինք սիրով, խոնարհութեամբ եւ ծառայութեամբ՝ ցոյց տալով աշխարհին, թէ ի՛նչ կը նշանակէ հետեւիլ Քրիստոսին: Տէր Յիսուս կը սորվեցնէ, թէ Թագաւորութեան արժեքները շատ անգամ հակասական են աշխարհի արժեքներուն հետ: Ուստի՝ մեզ կը հրաւիրէ նախ փնտռել Իր Թագաւորութիւնն ու արդարութիւնը:

- Թագաւորութեան առակներուն մէջ (Մտթ. 13) Տէր Յիսուս Քրիստոս զանազան պատմութիւններով կը պատկերէ անոր էութիւնը՝ օրինակ՝ սերմին եւ թաքուն գանձին միջոցով, շեշտելով թէ Թագաւորութիւնը կրնայ սկիզբ առնել փոքր ու աննշան ձեւով, բայց մեծ ազդեցութիւն ունենալ:
- Թագաւորութիւնը արդէն իսկ ներկայ է՝ հոգեւոր իմաստով, բայց պիտի հաստատուի ամբողջական կերպով Քրիստոսի երկրորդ գալուստին ժամանակ, երբ Աստուած պիտի նորոգէ ամէն բան եւ հաստատէ Իր Թագաւորութիւնը (Յայտն. 21.1–4): Այդ օրուան սպասելիս՝ մենք կոչուած ենք ապրելու որպէս հաւատարիմ քաղաքացիներ եւ գործօն մասնակցելու Աստուծոյ փրկագործութեան՝ տարածելով բարի լուրը ուրիշներու:

Խմբային Քննարկում (1.5 ժամ)

Քննարկում՝ Աստուծոյ Թագաւորութեան վերաբերեալ անձնական ընկալումներու շուրջ: Խրախուսել մասնակիցները կիսուելու իրենց փորձառութիւններով, երբ զգացած են Աստուծոյ Թագաւորութեան ներկայութիւնը իրենց կեանքին մէջ: Քննարկման հարցեր՝

- Ի՞նչ է Աստուծոյ Թագաւորութիւնը:
- Արդեօ՞ք ֆիզիքական վայր մըն է, թէ հոգեւոր իրականութիւն:
- Տէր Յիսուս ինչպե՞ս նկարագրեց Աստուծոյ Թագաւորութիւնը:
- Որո՞նք են հետեւանքները՝ որպէս Թագաւորութեան քաղաքացիներ՝ ր առօրեայ կեանքին մէջ:
- Ինչպե՞ս կրնանք գործօն կերպով փնտռել Աստուծոյ Թագաւորութիւնը մեր կեանքին մէջ:

Վերջնական Աղօթք – Դիմում Սուրբ Երրորդութեան

Սուրբ Երրորդութիւն՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, գոհ ենք քեզմէ, որ բացեցիր Քու Թագաւորութեան դռները մեր առջեւ եւ կոչեցիր մեզ կենդանի քաղաքացիներ ըլլալու: Խնդրենք՝ առաջնորդէ մեր սրտերն ու միտքերը, որպէսզի մեր կեանքին մէջ նախ փնտռենք Քու Թագաւորութիւնն ու արդարութիւնը: Թող մեր կենցաղը լեցուի խաղաղութեամբ, ուրախութեամբ եւ ճշմարտութեամբ՝ ի փառք Քու Սուրբ Անունիդ:

Ամէն:



Նիստ 2. Եկեղեցին՝ որպես Աստուծոյ Թագաւորութեան Գործիք

• **Նպատակ** – Հասկնալ Եկեղեցւոյ դերը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը հռչակելու եւ անոր պատրաստելու գործին մէջ:

• **Սուրբ Գրային յղումներ** –

o Մտթ. 16.18–19 – «Եւ ալ քեզ կ'ըսեն՝ դուն ժայռ ես, եւ այդ ժայռին վրայ պիտի շինեն իմ եկեղեցին, եւ դժոխքին դռները զայն չեն կրնար յաղթահարել: Քեզ պիտի տամ երկինքի արքայութեան բանալիները...»

o Եփես. 1.22–23 – «Եւ ամէն բան անոր ոտքերուն տակ հնազանդեցուց եւ զանկա որպէս եկեղեցիին գլուխը դրաւ բոլոր բաներուն վրայ: Եկեղեցին անոր մարմինն է, անոր լրումը՝ որ կը լեցնէ ամէն ամէն բանի մէջ»:

o Գործք 2.42–47 – «Անոնք անշեղ կը հետեւէին առաքեալներու ուսուցումին, հաղորդակցութեան, հացի բեկման ու աղօթքներուն: Ամէն մարդ կը զարմանար, որովհետեւ առաքեալներու ձեռքով բազում նշաններ ու զարմանալի գործեր կը կատարուէին: Հաւատացեալները բոլորն ալ միասին էին, եւ ունեցուածքները համատեղ կ'օգտագործէին: Անոնք կը ծախէին իրենց կալուածներն ու ապրանքները եւ կ'բաժնէին ըստ պէտքի: Ամէն օր միասին կը յաճախէին տաճար, հացը կը բեկանէին տուներուն մէջ եւ ուրախութեամբ կ'ուտէին: Անոնք սրտի պարգույթեամբ կը օրհնէին Աստուած եւ ամբողջ ժողովուրդին կողմէ հարգուէին: Եւ Տէրը օրէ օր կը շատացնէր փրկուածները իրենց խումբին մէջ»:

Առաջին խորհրդածութեան նիւթ (5 վայրկեան)

Պէտք է շեշտել Եկեղեցւոյ, մասնաւորապէս մեր պարագային՝ **Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ** կարեւորութիւնը Աստուծոյ Թագաւորութեան մէջ՝ հիմնուելով «այս ժայռին վրայ պիտի շինեն իմ եկեղեցին, եւ դժոխքի դռները զայն չեն յաղթահարեր» (Մտթ. 16.18) համարին վրայ:

Ուսուցողական Տեքստ (15–20 վայրկեան)

- Տէր Յիսուս Քրիստոս հաստատեց Եկեղեցին որպէս գործիք՝ Աստուծոյ Թագաւորութիւնը հռչակելու եւ պատրաստելու: Եկեղեցին պարզապէս չէնք մը կամ կազմակերպութիւն մը չէ, այլ կենդանի հոգեւոր մարմին մըն է, որ կազմուած է հաւատացեալներէ, որոնք կոչուած են ծառայելու, վկայելու եւ մարդկութիւնը առաջնորդելու դէպի Աստուծոյ Թագաւորութիւնը: Եկեղեցին գոյութիւն ունի, որպէսզի տարածէ Աւետարանը՝ պատրաստելով աշակերտներ բոլոր ազգերէն (Մտթ. 28.18–20):
- Գործք 2.42–47 հատուածին մէջ կը տեսնենք, թէ ինչպէս առաջին Եկեղեցին գործեց որպէս կենդանի Թագաւորութեան համայնք: Անոնք հաւատարիմ էին առաքեալներու ուսուցումին, հաղորդակցութեան, հացի բեկման եւ աղօթքին՝ որոնք պտուղ տուին միութեան ու աճի: Եկեղեցին կը մարմնաւորէ Թագաւորութեան արժէքները՝ պաշտամունքով, ուսուցումով, ծառայութեամբ եւ սիրով (Եփես. 4.11–13): Ամէն անդամ ունի իրեն յատուկ դեր մը, որ նպաստ կու տայ Քրիստոսի մարմնին եւ Եկեղեցւոյ առաքելութեան:

- Սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ որ 301 թուականին քրիստոնեությունը հաստատեց որպես պետական կրօնը եւ հիմնեց **Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին**, կարելու էր խաղաց այս գործընթացին մէջ: Անոր նուիրումը եւ ծառայութիւնը օգնեց ամրապնդել հաւատքը եւ միացնել հայ ժողովուրդը:
- Որպէս Եկեղեցւոյ անդամներ՝ մենք կոչուած ենք գործուն մասնակցելու անոր կեանքին եւ առաքելութեան: Ասիկա կը նշանակէ՝ ներկայ ըլլալ պաշտամունքներուն, ծառայել միւսներուն, կապուիլ համայնքին հետ եւ տարածել Աւետարանը: Պօղոս Առաքեալը կը խրախուսէ մեզ. «Չհոգնանք բարիք ընելուց» (Գաղ. 6.9)՝ յիշեցնելով, թէ մեր ջանքերը կը նպաստեն Թագաւորութեան ընթացքին: Այս բոլորը ընելով՝ կրնանք Քրիստոսի սէրը եւ շնորհքը ներկայ դարձնել մեր միջավայրին մէջ:

Խմբային Քննարկում (1.5 ժամ)

Ուսումնասիրութիւն Գործք 2-ի վրայ՝ հասկնալու համար, թէ ինչպէ՛ս առաջին Եկեղեցին ապրեցաւ որպէս Թագաւորութեան համայնք: Մասնակիցները կրնան բաժնուիլ խումբերու եւ քննարկել յատուկ հատուածներ՝ կիսուելով իրենց պատկերացումներով, թէ այս սկզբունքները ինչպէս կրնան կիրարկուիլ այսօր:

Քննարկման հարցեր՝

- o Ի՞նչու Տէր Յիսուս Քրիստոս հաստատեց Եկեղեցին:
- o Եկեղեցին, որպէս Աստուծոյ Թագաւորութեան գործիք, ինչպէ՛ս կ'գործէ:
- o Որպէս Եկեղեցւոյ անդամներ՝ ի՞նչ դեր ունինք:
- o Ինչպէ՛ս կրնանք աւելի լաւ կատարել մեր կոչումը Եկեղեցւոյ մէջ:
- o Ինչպէ՛ս կրնայ Եկեղեցին աւելի արդիւնաւետ կերպով հասնիլ համայնքին՝ Աստուծոյ Թագաւորութեան յորով:

Վերջնական Աղօթք – Դիմում Տէր Յիսուս Քրիստոսին (Որդիին)

Տէր Յիսուս Քրիստոս, գոհ ենք քեզմէ, որ հիմնուցիր Եկեղեցին՝ որպէս Քու Թագաւորութեան կենդանի գործիք: Օգնէ՛ մեզ ճանչնալ մեր տեղը Քու մարմնիդ մէջ եւ հաւատարիմ կերպով կատարել մեր առաքելութիւնը սիրով եւ վստահութեամբ: Ուղղէ՛ մեր քայլերը համայնքին մէջ ծառայելու, Աւետարանը տարածելու եւ Քու լոյսդ արձակելու համար: Թող Քու ներկայութիւնը առաջնորդէ եւ միացնէ մեզ իբրեւ Քու ժողովուրդ:

Ամէն:



Նխառ 3. Ընտանիքը՝ Եկեղեցույ Հիմքը

• **Նպատակ** – Ըմբռնել ընտանիքին դերը Եկեղեցույ կառուցման եւ զօրացման գործին մէջ:

• **Սուրբ Գրային յղումներ** –

o Ծննդ. 2.24 – «Ահա թէ ինչու մարդը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ պիտի միանայ իր կնոջը. ու երկուքը մէկ մարմին պիտի դառնան»:

o Եփես. 5.22–33 – «Կանայք թող հնազանդին իրենց ամուսիններուն, ինչպէս Տիրոջ. որովհետեւ ամուսինը կնոջ գլուխն է՝ ինչպէս Քրիստոսը՝ Եկեղեցույ գլուխը եւ Իր մարմնի Փրկիչը: Ինչպէս Եկեղեցին հնազանդ է Քրիստոսին, նոյնպէս ալ կանայք թող հնազանդին ամուսիններուն: Ամուսիններ, սիրեցէ՛ք ձեր կիներ, ինչպէս Քրիստոս սիրեց Եկեղեցին եւ Իր անձը մատնեց անոր համար, որպէսզի սրբացնէ զայն՝ ջրով լուացմամբ եւ Խօսքով: Իր դիմաց կանգնեցնէ զայն փառաւոր՝ առանց արատի, աղտեղութեան կամ թերութեան. այլ՝ սուրբ ու անարատ: Նոյնպէս, ամուսինները պարտաւոր են սիրել իրենց կիներ՝ իբրեւ իրենց մարմինը: Ով կը սիրէ իր կնոջը՝ ինքզինք կը սիրէ: Ո՛չ որ իր մարմինը չի ատեր, այլ կ'սնէ եւ կը խնամէ զայն՝ ինչպէս Քրիստոս՝ Եկեղեցին. որովհետեւ անոր մարմնի անդամներն ենք՝ Անոր մարմնէն եւ ոսկորէն: “Ահա թէ ինչու մարդը պիտի թողու իր հօրն ու մօրը եւ միանայ իր կնոջը. ու երկուքը մէկ մարմին պիտի դառնան”։ Այս խորհուրդը մեծ է. բայց եւ կը խօսիմ Քրիստոսի եւ Եկեղեցույ մասին: Դուք ալ, ամէնքդ, թող իւրաքանչիւրդ սիրէ իր կինը՝ ինչպէս ինքն իրեն, իսկ կինը՝ թող յարգէ իր ամուսինը»:

o Ա Տիմ. 3.4–5 – «Թող ճշմարիտ կերպով ղեկավարէ իր տունը՝ զաւակները պահելով հնազանդութեամբ եւ ողջախոհութեամբ. որովհետեւ եթէ մէկը իր տունը կառավարել չկարենայ, ինչպէ՛ս պիտի հոգ տանի Աստուծոյ Եկեղեցույ մասին»:

Առաջին խորհրդածութեան նիւթ (5 վայրկեան)

Աստուած նախ ընտանիքը ստեղծեց՝ որպէս Դրախտի հիմք: Այս խորհրդածութիւնը կը հիմնուի Ծննդոց 2.24 համարին վրայ. «Ահա թէ ինչու մարդը պիտի թողու իր հօրն ու մօրը եւ միանայ իր կնոջը. ու երկուքը մէկ մարմին պիտի դառնան»:

Ուսուցողական Տեքստ (15–20 վայրկեան)

- Ընտանիքը հասարակութեան եւ Եկեղեցույ հիմնասիւնն է: Աստուած ընտանիքը ստեղծեց որպէս սիրոյ, հաւատքի եւ հոգեւոր հասունացման վայր: Ծննդոց 2.24-ի մէջ կը տեսնենք Աստուծոյ նախախնամական նպատակը ամուսնութեան եւ ընտանեկան միութեան համար: Երբ ընտանիքները հաստատուն են հաւատքի մէջ, Եկեղեցին ալ կ'ամրանայ:
- Քրիստոնէական ընտանիքը միայն մարդոց միութիւն չէ, այլ փոքրիկ եկեղեցի՝ սուրբ վայր մը, ուր Աստուծոյ սէրը կ'ապրի եւ կ'արտացոլուի ամէնօրեայ վարքով: Ծնողները կոչուած են հաւատարիմ կերպով փոխանցելու Աստուծոյ Խօսքը իրենց զաւակներուն՝ առաջնորդելով սիրով եւ յարգանքով: Ինչպէս գրուած է. «Այս խօսքերը, որ այսօր կը պատուիրեմ քեզի, թող քու սրտիդ մէջ մնան. ուսուցանե՛լ զանոնք քու որդիներուդ, խօսե՛լ անոնց մասին՝ երբ նստիս, երբ քալես ճամբաներով, երբ պառկիս ու վեր կենաս» (Երկրորդ Օր. 6.6–7): Ընտանեկան միութիւնը կը

դառնայ վկայություն Աստուծոյ վերափոխիչ սիրոյ. ինչպէս Յեսու կը հաստատէ. «Ես եւ իմ տունը՝ Տիրոջ պիտի ծառայենք» (Յեսու 24.15):

- Հայ Առաքելական Եկեղեցին ամուսնությունը կը դիտէ որպէս Աստուծոյ պարգեւ եւ համայնքային ու ազգային կառուցուածքի կեդրոնական օղակ: Ան կ'օգնէ ամրացնելու հաւատքը, բարոյականութիւնը եւ ընկերային միասնությունը: Այդ ըմբռնումը փոխանցուելու պատասխանատվություն կու տայ ծնողներուն, որոնք պարտական են հաւատարիմ ձեւով օրինակ ծառայելու իրենց զաւակներուն:
- Յովսէփն ու Մարիամը՝ հնազանդութեամբ եւ հաւատքով ապրելով Աստուծոյ առաջնորդութեան տակ, միասնական մնացին նոյնիսկ դժուարութեան մէջ: Նոյն հաւատարմութեան կոչուած են այսօրուայ քրիստոնէայ ընտանիքները՝ ըլլալու հետեւողական եւ տոկուն Աստուծոյ կամքին մէջ:
- Բայց երբ ընտանիքները տկար են կամ կոտրած, Եկեղեցին կը դառնայ դիւրաբեկ: Անհամաձայնությունները, հաղորդակցութեան բացակայությունը եւ բարոյական անկումը կը խաթարեն Եկեղեցւոյ հաւատացեալ շունչը:
- Եկեղեցւոյ առողջությունը ուղղակիօրէն կախեալ է ընտանեկան կառուցուածքի ամրութենէն: Երբ ընտանիքները կ'աճին հաւատքի մէջ, Եկեղեցին կը դառնայ աւելի կենդանի, աւելի վկայող մարմին:

Խմբային Քննարկում (1.5 ժամ)

Մասնակիցները կրնան կիսուիլ իրենց ընտանեկան փորձառություններով՝ վերլուծելով, թէ ինչպէս անոնք ազդած են իրենց հաւատքի աճին վրայ:

Քննարկման հարցեր՝

- o Ինչո՞ւ ընտանիքը ունի այդքան կարեւոր տեղ Աստուծոյ ծրագրին մէջ:
- o Ինչպէ՞ս քրիստոնէական ընտանիքը կրնայ նպաստել Եկեղեցւոյ առաքելութեան:
- o Ի՞նչ հետեւանքներ կը յառաջանան, երբ ընտանիքները դիւրաբեկ են:
- o Ինչպէ՞ս կարելի է ամրապնդել ընտանեկան կապերը Եկեղեցւոյ հետ:
- o Եկեղեցին ի՞նչ կերպով կրնայ օժանդակել ընտանիքներուն:

Վերջնական Աղօթք – Դիմում Հայր Աստուծոյ

Հայր Երկնաւոր, գոհութիւն կու տանք Զեզ ընտանիքի անգին պարգեւին համար: Դուն զայն հիմնեցիր որպէս սիրոյ, հաւատքի եւ ճշմարիտ արժէքներու բուն օճախ: Ծնորի՛ւ, որ մեր տուները դառնան Զեզ նուիրուած վայրեր՝ լեցուն համբերութեամբ եւ փոխադարձ սիրով: Օրհնէ՛ մեր ճիգերը՝ կառուցելու համերաշխ ընտանիքներ, որոնք կ'ամրապնդեն Եկեղեցւոյ ու համայնքի հիմքերը:

Ամէն:

Նիստ 4. Ամուսնությունը եւ Ռոմանտիկ Յարաբերությունները

• **Նպատակ** – Տեսնել եւ ընկալել, որ ամուսնությունը սրբազան կապ է, հաստատուած Աստուծոյ կողմէ, եւ ունի կենսական դեր՝ ընտանիքի ու Եկեղեցւոյ կեանքին մէջ:

• **Սուրբ Գրային յղումներ** –

o Եփես. 5.31–33 – «Ահա թէ ինչու մարդը պիտի թողու իր հօրն ու մօրը եւ միանայ իր կնոջը. ու երկուքը մէկ մարմին պիտի դառնան: Այս խորհուրդը մեծ է. բայց ես կը խօսիմ Քրիստոսի եւ Եկեղեցւոյ մասին: Նոյնը կը վերաբերի ամենքիդ՝ թող իւրաքանչիւրը սիրէ իր կինը՝ ինչպէս ինքն իրեն, եւ կինը՝ յարգէ իր ամուսինը»:

o Մատթ. 19.4–6 – «Ան պատասխանեց անոնց ու ըսաւ. “Չե՞ք կարդացած, թէ Արարիչը սկզբէն արու ու էգ ստեղծեց զանոնք եւ ըսաւ. «Ահա թէ ինչու մարդը պիտի թողու իր հօրն ու մօրը եւ միանայ իր կնոջը, ու երկուքը մէկ մարմին պիտի դառնան»: Ուրեմն այլեւս երկու չեն, այլ մէկ: Ինչ որ Աստուած միացուցած է, մարդ թող չբաժնէ”»:

Առաջին խորհրդածութեան նիւթ (5 վայրկեան)

Ամուսնությունը Աստուծոյ ծրագիրն է: Այն ստեղծուած է, որպէս մարդուն եւ կնոջը միացնող սուրբ կապ, իսկ ռոմանտիկ յարաբերությունները կոչուած են այս միութեան սահմաններուն մէջ գոյություն ունենալու: Շեշտը՝ «Երկուքը մէկ մարմին պիտի դառնան» համարին վրայ:

Ուսուցողական Տեքստ (15–20 վայրկեան)

- Ամուսնությունը սուրբ ուխտ մըն է՝ հաստատուած Աստուծոյ կողմէ: Ան ընտանեկան եւ համայնքային կեանքի հիմքն է: Աստուած զայն ստեղծած է որպէս արու եւ էգ մարդու միություն՝ շաղախուած սիրով, հաւատարմութեամբ եւ փոխադարձ յարգանքով: Եփեսացիներու նամակին մէջ Պօղոս առաքեալը կը շեշտէ, որ ամուսիններուն յարաբերությունը պէտք է արտացոլէ Քրիստոսի եւ Եկեղեցւոյ կապը:
- Ռոմանտիկ յարաբերությունները, յատկապէս երիտասարդութեան մէջ, պէտք է ընկալուին որպէս ամուսնութեան նախապատրաստություն: Աստուծոյ ծրագիրին մէջ՝ զգացական եւ սեռական կապը ունի իր լաւագոյն տեղը ամուսնութեան մէջ: Այս ձեւով՝ զոյգերը կը ծանօթանան միմեանց խորապէս եւ կը պատրաստուին հաւատարիմ եւ առողջ միութեան:
- Սէրը՝ ըստ Աստուածաշունչի, միայն զգացում չէ, այլ գործող ու նուիրեալ վերաբերում՝ լեցուն համբերութեամբ, բարիքով եւ ներողամտութեամբ: Քրիստոնէական ընտանիքին մէջ, բաց հաղորդակցությունը, միասնական աղօթքը եւ միմեանց ծառայելու պատրաստակամությունը առանցքային արժէքներ են:
- Ամուսնությունը նաեւ Աստուծոյ հանդէպ պատասխանատվութեան մի դաշտ է. զոյգերը կոչուած են համատեղ կերպով Աստծուն ծառայելու, հաւատքով սերունդներ դաստիարակելու եւ աշխարհի մէջ լոյս ըլլալու:
- Նաեւ պէտք է յստակ ըլլայ, թէ ամեն յարաբերություն, որ կը դուրս գայ ամուսնութեան սահմաններէն՝ կը խաթարէ այն պատկերն ու նպատակը, զոր Աստուած յատկացուցած է մարդուն:

- Հայ Առաքելական Եկեղեցւոյ աւանդութեան մէջ՝ ամուսնութիւնը միշտ դիտուած է որպէս հոգեւոր դաշինք, եւ ոչ միայն ընկերային համաձայնութիւն: Միջնադարեան սուրբ հայրերը, ինչպէս Ներսէս Շնորհալին, ամուսնութիւնը կը նկարագրէին որպէս «սիրոյ դպրոց», ուր զոյգերը՝ վստահութեամբ, համբերութեամբ եւ միասնական աղօթքով, ճամբորդում են Աստուծոյ հետ:

Խմբային Քննարկում (1.5 ժամ)

Քննարկումի ընթացքին, մասնակիցները կը բաժնեն իրենց պատկերացումները՝ թէ ինչպէս կարելի է պահպանել Աստուծոյ կեդրոնով կառուցուած յարաբերութիւններ:

Քննարկման հարցեր՝

o Ի՞նչ նպատակով հաստատուեցաւ ամուսնութիւնը Աստուծոյ կողմէ:

o Ինչպէ՞ս կրնան զոյգերը կառուցել առողջ ու Քրիստոսակեդրոն ընտանիք:

o Ի՞նչ քայլեր պէտք է առնէ անհատը՝ որպէսզի ունենայ Աստուածահաճոյ ու կայուն ռոմանտիկ յարաբերութիւն:

Վերջնական Աղօթք – Դիմում Սուրբ Հոգիին

Սուրբ Հոգի, կը կանչենք Զեզ մեր մէջ՝ փափաքելով, որ ամուսնութիւններն ու սիրային կապերը լեցուին Զու ներկայութեամբ: Սորվեցուր մեզ սիրելի խորութեամբ, ներելի խոնարհութեամբ եւ ապրեցնել այն միութիւնը, զոր Աստուած սահմանեց: Թող մեր յարաբերութիւնները արտացոլեն Զու սիրոյդ շունչը եւ դառնան վկայութիւն Զու պատկերելի:

Աղաչենք՝ բնակուի՛ր մեր մէջ եւ առաջնորդէ՛ մեզ խաղաղութեամբ:

Ամէն: